



# ՍՈՒՐԲ ՉԱԿՈԲ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՑԻ

### ԽԱԶՎԵՐԱՅԻՆ ԵՏՔ ԵՐՐՈՐԴ ԿՐՈՎԻ

8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023

Կիրակնօրեայ Ընթերցումներ էջ 1

Ծանուցումներ էջ 2

### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒ ԳԻՐՔԵՆ (17.7-14)

**Ե**րբ այն օրը գայ, մարդը իր արարիչին միայն պիտի յուսայ, իր աչքերը հսրայէլի սուրբ Աստուծոյն պիտի յառէ: Այլեւս իր յոյսը պիտի չկապէ մեհեաններուն կամ իր ձեռագործ չաստուածներուն: Մարդիկ միայն իսրայէլի սուրբ Աստուծոյն պիտի յուսան: Այլեւս իրենց աչքերը պիտի չյառեն իրենց գարշելի չաստուածուհիին փայտէ արձանիկներուն:

Այն օրը քաղաքներդ պիտի լքուին եւ աւերուին, այնպէս՝ ինչպէս պարզուեցան ամորհացիներու եւ խեւացիներու քաղաքները իսրայէլացիներու յարձակումին դիմաց, քանի որ դուն լքեցիր զԱստուած, քու փրկիչդ, եւ մոռցար Տէրը, քու օգնականդ: Արդ, քանի որ քու տնկած պարտէզդ եւ ցանած սերմերդ օտար չաստուածներու նուիրուած են, ինչ որ ալ տնկես, եւ ցանածդ նոյն օրն իսկ ծաղկի՝ սակայն հունձքին արդիւնք պիտի չունենաս. այն օրը Աստուած հօր մը պէս իր ժառանգութիւնը պիտի բաժնէ, եւ դուն որպէս հատուցում՝ տրտմութիւն պիտի ունենաս:

Վա՛յ բոլոր այն ազգերուն որոնք ալեկոծ ծովու մը պէս Աստուծոյ դէմ կը մոլեգնին

եւ որոնք ալիքներու նման կը շառաչէն: Նոյնիսկ եթէ ծովերուն պէս անհամար ըլլան անոնք, ովկիանոսի ալիքներուն սաստկութիւնն իսկ ունենան՝ սակայն Աստուած պիտի ճզմէ ու ցրուէ զանոնք այնպէս՝ ինչպէս հովը կը քշէ յարդին շիւղը, ինչպէս մրրիկը կ'աւլէ կառքերուն հանած փոշին:

Ողբ ու կոծով պիտի փակուի օրն իրենց, առաւօտը դեռ չբացուած՝ ա'լ գոյութիւն պիտի չունենան: Ահա ա'յս պիտի ըլլայ մեր յափշտակիչներուն, մեր կողոպտիչներուն վիճակուած ճակատագիրը:

### ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԻՆ (13.5-13)

**Ք**ննեցէ՞ք դուք ձեզ, տեսնելու համար թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞ք: Փորձեցէ՞ք դուք ձեզ. Քրիստոսի ներկայութիւնը կը զգա՞ք ձեր ներսիդին, թէ պարզապէս իր անունը կը կրէք: Յուսամ գիտէք թէ մենք այդ փորձը յաջողապէս կատարած ենք: Եւ կը խնդրենք Աստուծմէ որ չարիք չգործէք: Ասիկա ըսելով չենք ուզեր մենք մեզ ընտիր ցոյց տալ. ընդհակառակը, կ'ուզենք որ դուք բարին գործէք, նոյնիսկ մեզ ամօթով ձգելու չափ: Որովհետեւ Աստուծոյ ճշմարտութեան դէմ ոչինչ կրնանք ընել, այլ կրնանք միայն անոր համար աշխատիլ: Ուրախութեամբ յանձն կ'առնենք տկարանալ, միայն թէ դուք զօրանաք: Ուստի կ'աղօթենք որ հետզհետէ

կատարեալ ըլլաք: Ասիկա հեռուէն կը գրեմ ձեզի, որպէսզի երբ գամ՝ պէտք չունենամ խստութեամբ վարուելու ձեզի հետ այն իշխանութեամբ որ Տէրը ինձի տուաւ ուղղելու համար եւ ոչ թէ պատժելու:

Կը փակեմ նամակս, եղբայրներ. ո՞ղջ եղէք: Կատարեալ ըլլալու աշխատեցէք. միսիթարուեցէք: Համերաշխ եւ խաղաղութեամբ ապրեցէք իրարու հետ, եւ այն ատեն խաղաղութեան ու սիրոյ Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ:

Սիրոյ համբոյրով ողջունեցէք զիրար: Այստեղի քրիստոնեաները կ'ողջունեն ձեզ:

Տէր Յիսուս Քրիստոսի չնորդքը, Աստուծոյ սէրը եւ Սուրբ Հոգիի հաղորդութիւնը ձեր բոլորին հետ ըլլան: Ամէն:

## ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԸՍ ՄԱՐԿՈՍԻ

(11.27-33)

**Յ**իսուս եւ իր աշակերտները դարձեալ երուսաղէմ եկան:

Մինչ Յիսուս տաճարին մէջ կը պտըտէր, իրեն մօտեցան քահանայապետները, օրէնքի ուսուցիչներն ու երէցները, եւ հարցուցին. «Ի՞նչ իշխանութեամբ կը կատարես այս բաները: Ո՞վ քեզի այդ իշխանութիւնը տուաւ»: Յիսուս անոնց պատասխանեց. «Լա՛ւ, ձեզի պիտի ըսեմ թէ ինչ իշխանութեամբ կ'ընեմ ասոնք, եթէ դուք ալ իմ հարցումիս պատասխանէք: Յովհաննէսի մկրտելու իշխանութիւնը

Հոգևանգատեալ  
Եեր Արքանագրութիւնները  
ԱԱԽՈՐՕՔ ԿԱՏԱՐԵՑԷՔ ԿԱՊՈՒԵԼՈՎ  
ԵԿԵՂԵՑԻ ԳՐԱԿԱՆԵԱԿ՝  
514 331 5445 x202 ԹԻՒԽ

Աստուծմէ՞ տրուած էր իրեն թէ մարդոցմէ: Պատասխանեցէք տեսնեմ»:

Անոնք սկսան իրարու միջեւ խորհիլ եւ ըսել. «Եթէ ըսենք՝ Աստուծմէ տրուած էր, մեզի պիտի ըսէ թէ ինչո՞ւ չհաւատացիք իրեն. իսկ “մարդոցմէ էր” չենք կրնար ըսել»: Այսպէս կ'ըսէին՝ ժողովուրդէն վախնալով, որովհետեւ ամէն մարդ գիտէր թէ Յովհաննէս ճշմարտապէս մարդարէ էր: Ուստի պատասխանեցին Յիսուսի. «Զենք գիտեր»: Յիսուս ալ իրենց հարցումին պատասխանելով ըսաւ. «Այն ատեն ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ի՞նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները»:

ԱՅԵԼԵՅԵՇ ԵԿԵՂԵՑԻ

ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՉՇ

ԵՒ ԶԵՐ ՀԱԽԱՏՈՒԹԻՒՆ ՅԱՅՏԱԿԵՑՔ

(like).

[www.facebook.com/SourpHagopChurchMontreal](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)

ԱՅԵԼԵՅԵՇ Ե

Ս. ՅԱԿՈԲ ԱՊՈՁԱԿՐՈՒԱՅԻ ՄԱՅՐ

ԵԿԵՂԵՑԻ ԿԱՅՔԵՉՇ՝

[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)

ԱՅԵԼԵՅԵՇ Ե

Ս. ՅԱԿՈԲ ԱՊՈՁԱԿՐՈՒԱՅԻ ՄԱՅՐ

ԵԿԵՂԵՑԻ YouTube ԿԱՅԱԿԱ՝

ՓԱՏՌԵԼՈՎ

Sourp Hagop Armenian Church